ՈՐՈՇՈՒՄ

9 **դեկտեմբերի** 2011 **թվականի** **թիվ** 877 **քաղ. Մոսկվա**

«Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշեց.

1. Ընդունել «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 018/2011) (կցվում է):

2. Հաստատել՝

2.1. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 018/2011) պահանջների պահպանումը (կցվում է).

2.2. Ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 018/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների

(փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Սահմանել՝

3.1. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից.

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ՝ արտադրանք)՝ մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մտնելու օրը, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, սակայն ոչ ուշ, քան 2016 թվականի հուլիսի 1-ը՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների եւ բաղադրիչների խմբաքանակների, որոնց գործողության ժամկետը սահմանափակվում է քանակական քվոտայով:

Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ սույն որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավերական են՝ մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Նշված փաստաթղթերը կարող են նաեւ օգտագործվել որպես ապացուցողական նյութեր՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը ստուգելու նպատակով, այդ թվում՝ նշված փաստաթղթերի գործողությունը Մաքսային միության բոլոր անդամ պետությունների տարածքում տարածելու համար:

Սույն կետի առաջին պարբերության մեջ նշված փաստաթղթերը սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված կարգով տարածելիս՝ կիրառվում են

նշված փաստաթղթերի ձեւակերպման պահին՝ մինչեւ սույն Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը գործող պահանջները: Նման դեպքում Տեխնիկական կանոնակարգի հիման վրա տրամադրված փաստաթղթի գործողության ժամկետը պետք է համապատասխանի այն փաստաթղթի գործողության ժամկետին, որը գործողության մեջ էր մինչեւ սույն Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրում կամ ընդունում չի թույլատրվում.

3.3. մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը թույլատրվում է Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան արտադրանքի արտադրությունը եւ շրջանառության մեջ դնելը՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը կամ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 386 որոշմանը համապատասխան:

Այդպիսի արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում.

3.4. սույն Որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի (ծառայության ժամկետի) ընթացքում:

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծ եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, եռամսյա ժամկետում, սահմանված կարգով այն ներկայացնել Հանձնաժողովի հաստատմանը:

5. Ռուսական կողմին՝

5.1. առնվազն երեք տարին մեկ անգամ նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգում դրա թարմացման համար փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ՝ տրանսպորտային միջոցների առնչությամբ անվտանգության պահանջների համաձայնեցման վերաբերյալ միջազգային համաձայնագրերում Կողմերի մասնակցության մասով պարտավորությունների կատարման հետ կապված.

5.2. առնվազն տարին մեկ անգամ ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի թարմացումը՝ ցանկերում ներառված ստանդարտների դիտանցման եւ կիրառման արդյունքների, ինչպես նաեւ Կողմերի մարմինների առաջարկությունների հիման վրա.

5.3. հաշվի առնելով Կողմերի առաջարկությունները՝ մշակել եւ սահմանված կարգով Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել միջպետական ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագրի նախագիծը.

5.4. մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մշակել եւ Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տրանսպորտային միջոցի տիպի հաստատման, շասսիի տիպին հաստատման, Տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունը հաստատող փաստաթուղթը վերացնելու մասին ծանուցումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ տրանսպորտային միջոցի՝ դրա կառուցվածքում կատարված փոփոխություններով, անվտանգության պահանջներին համապատասխանության մասին վկայականների ձեւաթղթերի լրացման Կանոնները, որոնք, այդ թվում, ներառում են նշված փաստաթղթերի ձեւաթղթերը եւ համարների կազմության նկատմամբ պահանջները.

5.5. Սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած եռամսյա ժամկետում մշակել Տեխնիկական կանոնակարգում փոփոխությունների նախագիծ՝ սանիտարական տրանսպորտին ներկայացվող պահանջներ սահմանելու նպատակով, եւ սահմանված կարգով ներկայացնել այն Հանձնաժողովի քարտուղարություն:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմիններ, եւ Հանձնաժողովին տեղեկացնել դրա մասին.

6.2. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը:

7. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 15 օր հետո, եթե այդ ժամկետի ընթացքում Կողմերը չհայտարարեն Տեխնիկական կանոնակարգին իրենց հավանություն տալը կասեցնելու մասին:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**